ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

Հ Ր Ա Մ Ա Ն

№_____ « ____ »_____ **2024 թ.** **ք.Երևան**

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 3-Ի N 200-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի 2023 թվականի մայիսի 3-ի «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները հաստատելու և պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի 2021 թվականի օգոստոսի 17-ի N 259-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 200-Ա հրամանի 1-ին կետով հաստատված 6-րդ հավելվածում՝ Հայաստանի հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի քարտուղարության կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 2-րդ բաժնի 2.1 կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր 5-րդ ենթակետով.

«5) էլեկտրոնային համակարգի (www.e-auctions.am) միջոցով պետական գույքի (այդ թվում բաժնետոմսերի) օտարման և վարձակալության տրամադրման էլեկտրոնային աճուրդի անցկացման գործընթացի ապահովումը:»,

2) 3-րդ բաժնի 3.1 կետում՝

ա. 8.1-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8.1) իրականացնում է էլեկտրոնային համակարգի (www.e-auctions.am) միջոցով պետական գույքի (այդ թվում բաժնետոմսերի) օտարման և վարձակալության տրամադրման էլեկտրոնային աճուրդի անցկացման գործընթացը,»,

բ. 9-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել:

X

ԱՌՆԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ Подписано: AVETISYAN ARNAK 1701920336